«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ
Վ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 28 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3, 88/1-1
Հեռ. 3-04-23 / 3-05-63
Է.փոստ: vanadzor28@schools.am

"PRIMARY SCHOOL #28 NAMED
AFTER V.MELIQSETYAN" SNPO
VANADZOR, LORI REGION, RA

Taron-2, CBC-3, 88/1-1Vanadzor
Tel: 3-04-23 / 3-05-63
E-mail: vanadzor28@schools.am

№-96

11.հոկտեմբերի. 2022թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Գ. ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սաֆարյան,

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ֆիզկուլտուրայի (23 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ.-ի հոկտեմբերի 31-ին, ժամը 14^{00}-ին, Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3 88/1-1 Հեռ.՝ (0322) 3-04-23, (093) 64-33-43

դպրոցի տնօրեն Ա. Բրուտյան